

# ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ. ՄԵԾ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

*Posted on October 7, 2020 by Keghart*



Category: [Opinions](#)



**Վահրամ Այվազյան**, Երեւան, 30 Սեպտեմբեր 2020

Սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ Ադրբեջանի սանձազերծած նախահարձակումը, Պաշտպանության բանակի փայլուն ռազմագործողությունները և աշխարհաքաղաքական և մերձավորարևելյան տարածաշրջանի ռազմաքաղաքական վերաճևումները ինձ ստիպում են ևս մեկ անգամ անդրադառնալ դեռ սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության օրը, իմ կողմից հրապարակված Հայաստանի զարգաման տեսլականի **12 կետերին**:

Սեպտեմբերյան մարտերը Արցախում, Հայաստանի արևմտյան հարևան Թուրքիայի ուղիղ և հարձակողական ներգրավվածությունը Պաշտպանության բանակի դեմ մարտերում և միջազգային հանրության լրոզված, բայց սպասելի անդամ կոչերը խաղաղության հաստատման վերաբերյալ ևս մեկ անգամ հայ ժողովրդին եկան ապացուցելու, որ վերջինս պարտավոր է ինքնակազմակերպվել և չեզոքացնել բոլոր սպառնալիքները՝ հույսը դնելով միմիայն հայոց ռազմական ուժի և թերևս այս օրերին արհամարհվող, բայց ոչ պակաս կարևոր հզոր տնտեսական զարգացման վրա:

Թեպետ հպարտորեն կարող ենք արձանագրել, որ Սփյուռքը իր տոկոսն մասնակցությունն է ունեցել և ունենում է արցախյան գոյամարտերում և բանակաշինության մեջ, բայց վերոնշյալ երկրորդ հարթակի՝ Հայաստանի տնտեսության զարգացման գործում Սփյուռքի ներուժի նույնիսկ աննշան տոկոսը չի օգտագործվում, ինչը ես, որպես Հայաստանում ծնված և գործունեություն ծավալած, բայց Սփյուռքում էլ մի քանի տարի ապրած հայորդի, համարում եմ ամենամեծ հայկական ծախողումը Հայաստանի անկախացումից ի վեր:

Անկասկած, Արցախի դեմ սանձազերծված թուրք-ադրբեջանական այս պատերազմը մենք ավարտելու ենք հաղթանակով, ինչը բարձրացնելու է Հայաստանի՝ որպես լուրջ ռազմաքաղաքական դերակատարի կշիռը Մերձավոր Արևելքում: Ռազմի դաշտում տղերքի փայլուն հաղթանակը արձանագրելու համար մեզ անհրաժեշտ է ո՛չ միայն դիվանագիտական և քաղաքական ճիշտ որոշումների փաթեթ, այլև տնտեսական «բլիցկրիգ»՝ կայծակնային զարգացում և Սփյուռքից եկող ներդրումների հեղեղ, որպեսզի ի լուր աշխարհի ավետենք Հայոց նոր վերածննդի մասին: Շեշտեմ, որ բանակաշինությանն ուղղված այս մեծ մտադրությունը՝ տնտեսական «բլիցկրիգ»ը, այսօրվա ժամանակի հրամայականն է և չունի այլընտրանք, քանզի այս պատմական պահը բաց թողնելու իրավունք մենք՝ ցեղասպանություն վերապրած ժողովուրդը, չունենք:

Խոսքից գործի անցնելու համար, ըստ իս, անհրաժեշտ է՝

1. Հայաստան-Սփյուռք կապերը բարձրացնել համակարգային մակարդակի, այն է՝ նախկին Սփյուռքի նախարարության, այսօրվա Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի և Սփյուռքի բոլոր ազդեցիկ կազմակերպությունների գործունեության

ուսումնասիրություն անել, տալ գնահատական և ձևավորել միասնական և որոշումների կայացման մեջ մասնակցություն ունեցող քաղաքատնտեսական մարմին, որի միջոցով էլ Սփյուռքը իր ուղղակի մասնակցությունը կունենա ո՛չ միայն Հայաստանում քաղաքական օրակարգի ձևավորմանը, այլև տնտեսական կայծակնային զարգացման (բլիցկրիզի) դժվարին, բայց պտղաբեր աշխատանքին:

2.Սփյուռքի ներդրումային հորդառատ անձրևով Հայաստանի՝ երաշտից կծկված անջրդի տնտեսությունը ոռոգելու և վերակենդանացնելու համար բոլոր սփյուռքահայ ներդրողներին առաջիկա հինգ տարիներին ազատել հարկերից, տրամադրել տարածք և աջակցություն Հայաստանում և Արցախում տնտեսական տարատեսակ գործունեության համար: Ներդրումային այդ հեղեղը կնպաստի հայ քաղաքացու տնտեսական հարստացմանը, ինչը Հայաստանը կդարձնի է՛լ ավելի գրավիչ նոր ու է՛լ ավելի լայնատարած ներդրումների համար:

3.Հենց այդ ներդրումների լույսի ներքո էլ միջնաժամկետ հաշվարկում իրականացնել բնակարաշինական համալիր ծրագիր Հայաստանում և Արցախում՝ Սփյուռքից կազմակերպված ներգաղթ իրագործելու և հստակ արձանագրելու մեկ, միացյալ Հայաստանի այնքան երանելի, բայց և իրական գաղափարը:

Հենց այս 3 ընդհանուր դրույթների վրա էլ հիմնված է «Հայաստան-Սփյուռք. մեծ մտադրություն» տնտեսական բլիցկրիզի գաղափարս, որով Հայաստանը կվերածվի հզոր տնտեսություն ու լուրջ առաջարկներ ներկայացնող մի պետության, ում հետ այլևս որևէ երկիր չի խոսի ուժի սպառնալիքի լեզվով:

Ռազմական «բլիցկրիզ»ը պսակվում է հաջողությամբ, ուստի ժամանակն է գերլարել աշխարհասփյուռ հայության ներուժը՝ տնտեսական «բլիցկրիզ» սկսելու համար:

*Վահրամ Այվազյանը միջազգայնագետ է և ցեղասպանագետ, ԱՄՆ Նախկին փոխնախագահ և Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր Ալ Գորի թիմակիցն է Զլայմիթ Ռիալիթի (Climate Reality) ծրագրում ու Նորարարական (startup) գաղափարների հեղինակ է: Վահրամը աշխարհի շուրջ երեք տասնյակ երկրներում հանդես է եկել դասախոսություններով Հայոց ցեղասպանության, միջազգային հարաբերությունների ու բնապահպանական խնդիրների վերաբերյալ, բազմաթիվ գիտական և վերլուծական հոդվածների հեղինակ է:*



**There are no comments yet.**